

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Մարզկենտրոնը՝ ք. Վանաձոր**



ՀՀ **Լոռու մարզը** տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում, զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը, իսկ բնակչության թվաքանակով՝ երկրորդը (ք.Երևանից հետո):

Մարզը գտնվում է հանրապետության հյուսիսում, պետական սահմանով սահմանակից է Վրաստանին, հարավից՝ ՀՀ Կոտայքի և Արագածոտնի մարզերին, արևմուտքից՝ ՀՀ Շիրակի մարզին և արևելքից՝ ՀՀ Տավուշի մարզին:

**Վարչատարածքային բաժանումը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ**

	Տարածքը, քառ. կմ	Մայրաքաղաքը/մարզկենտրոնը	Բնակչության խտությունը, մարդ/կմ <sup>2</sup>	Համայնքներ			Մարզկենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ*
				քաղաքային	քաղաքային	գյուղական	
Հայաստանի Հանրապետություն	29743	Երևան	109	48	12	866	-
ՀՀ Լոռու մարզ	3789	Վանաձոր	74	8	-	105	115

\* Ըստ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2008թ. ճշգրտված տվյալների:

**ՀՀ Լոռու մարզի քաղաքները**

*(հունվարի 1-ի դրությամբ)*

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2005	2006	2007	2008	2009
Վանաձոր	1924	115	105.7	105.5	105.2	105.0	104.8
Ալավերդի	1938	162	16.4	16.2	16.1	16.0	15.9
Ախթալա	1995	186	2.4	2.4	2.4	2.4	2.4
Թումանյան	1995	148	1.9	1.9	1.8	1.8	1.8
Շամլուղ	1995	196	0.7	0.7	0.7	0.7	0.7
Ստեփանավան	1938	139	16.1	16.0	15.9	15.9	15.8
Տաշիր	1983	156	9.1	8.9	8.9	8.7	8.7

<b>Տարածքը</b>	<b>3789 քառ. կմ</b>
<b>ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը</b>	<b>12.7 %</b>
<b>Քաղաքային համայնքներ</b>	<b>8</b>
<b>Գյուղական համայնքներ</b>	<b>105</b>
<b>Քաղաքներ</b>	<b>8</b>
<b>Գյուղեր</b>	<b>122</b>
<b>Բնակչության թվաքանակը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>281.7 հազ. մարդ</b>
<i>այդ թվում՝</i>	
<b>քաղաքային</b>	<b>165.2 հազ. մարդ</b>
<b>գյուղական</b>	<b>116.5 հազ. մարդ</b>
<b>ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2008թ.</b>	<b>8.7 %</b>
<b>Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը</b>	<b>58.6 %</b>
<b>Գյուղատնտեսական նշանակության հողեր</b>	<b>251198 հա</b>
<b>այդ թվում՝ վարելահողեր</b>	<b>42120 հա</b>

«**Լոռու մարզի** տարածքը զբաղեցնում է պատմական Հայաստանի Գուգարք նահանգի արևելյան կեսը (այս տարածքում X-XI դարերում գոյություն է ունեցել հայկական անկախ պետություն՝ Լոռու թագավորությունը, մարզի տարածքի մի մասը հանդիսացել է Չաքարյանների տոհմական կալվածքը):

Մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը **Թեժ լեռան գագաթն** է (3101 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

Բազմաբնույթ են տարբեր դարերից ժառանգած ճարտարապետական հուշարձանները:

Պետական պահպանության տակ են գտնվում մոտ 3000 հուշարձաններ:

Առանձնապես ուշագրավ են Սանահինի ու Հաղպատի համալիրները, Օձունի վանքային համալիրը, Ախթալայի վանքային համալիրն ու բերդը, Լոռի բերդի և Տաշիրի բերդի ավերակները, Սպիտակի քարայր-կացարանները և պղնձեղարյան բնակատեղին, Վանաձորի V դարի վանքերը, Թագավորանիստ բնակատեղի ամրոցը, կիկլոպյան 2 ամրոցների մնացորդները, Քոսի ճոթեր պղնձեղարյան բնակատեղին, Դսեղի ս. Գրիգոր Բարձրաքաշ վանքը և այլն:

**Սանահինի վանքը** (ըստ Հ. Աճառյանի, վերծանվում է որպես Սանհին՝ «հին կարաս» անվամբ) հայ միջնադարյան ճարտարապետության աչքի ընկնող համակառույցներից է և նշանակալի դեր է կատարել հայ հոգևոր ու մշակութային կյանքում: 1000-ամյա պատմություն ունեցող այս վանքում հայ դպրության գործին իրենց հարուստ գիտելիքներն են ի սպաս դրել մշակութային և կրոնական նշանավոր գործիչներ Դիոսկորոս կաթողիկոսը, Անանիա, Հակոբ և Հովհաննես Սանահնեցիները, Գրիգոր Տաթևոպոլսի, մագիստրոս Գրիգոր Պահլավունին: Հոգևոր դպրոցի սաներից է եղել մեծ երգիչ Մայաթ Նովան:

**Սանահինի վանքը**, ինչպես նաև 6 կմ հեռավորությամբ գտնվող **Հաղպատի վանքը** հիմնադրվել են X դարի I կեսին: **Հաղպատի վանքը** Հայաստանի խոշորագույն և նշանավոր վանքային համալիրներից է, որում առավել շեշտված ձևով են դրսևորված միջնադարի հայ ճարտարապետության առանձնահատուկ գծերը՝ գեղատեսիլություն, շրջապատող միջավայրի հետ ներդաշնակ կապ, աշխարհիկ մտածողություն և աշխարհիկ շինությունների գերակշռություն: Հուշարձանը բնության և մարդկային ստեղծագործության հազվագյուտ ներդաշնակություն է: Վանքը հայտնի է որպես հայ միջնադարյան հոգևոր և մշակութային կարևոր կենտրոններից մեկը, եղել է խոշոր վանական կալվածատիրական հաստատություն:

**Հաղպատի վանքը** XII դարի կեսերից հանդիսացել է Կյուրիկյան թագավորության թեմական կենտրոնը: Այդտեղ արգասաբեր գործունեություն են ծավալել գիտնական, մատենագիր Դավիթ Քորայրեցին, բանաստեղծ Հովհաննես Երզնկացի Ծործորեցին (Պլուզ), իրավագետ Դավիթ Ալավկու որդին և ուրիշներ: Այստեղ է ընդօրինակվել Հաղպատի հռչակավոր ավետարանը (1211թ.): Հաղպատում կրոնավորել է **Մայաթ Նովան**:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

**Մարզի** տնտեսության առաջատար ճյուղերը **գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն** են:

**Գյուղատնտեսության** ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքի արտադրությունները:

Մարզի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերություն և սննդամթերքի արտադրություն ճյուղերը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է **ՀՀ գլխավոր երկաթուղին:**

**Քեոնատղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

2008թ. մարզի **տնտեսության հիմնական ճյուղերի** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 5.7 %,
- գյուղատնտեսություն՝ 9.9 %,
- շինարարություն՝ 0.7 %,
- մանրածախ առևտուր՝ 2.0 %,
- ծառայություններ՝ 1.4 %:

## Վանաձոր քաղաք

Մարզկենտրոնը **Վանաձոր** քաղաքն է (մինչև խորհրդային տարիները՝ Մեծ Ղարաքիլիսա, խորհրդային տարիներին՝ 1935-1992թթ.՝ Կիրովական, 2008թ. տարեվերջին՝ 104.8 հազ. բնակիչ):

Գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Տաշիր-Չորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ է մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով (Թագավորանիստ, Մաշտոցի բլուր, Քոսի ճոթեր և այլն):

Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին՝ Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին միացավ նաև Լոռին, և Ղարաքիլիսան դարձավ սահմանային գորակայան:

1849թ. Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր, 1870թ. Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899թ.՝ Թիֆլիս – Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը մեծապես նպաստել է գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Որոշակի ընդհատումներով գործում է քաղաքի քիմիական համալիրը: Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

### **Սպիտակ քաղաք**

*Սպիտակ* քաղաքը (2008թ. տարեվերջին՝ 15.1 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 95 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Ջրաղեցնում է 1400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան–Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Քաղաքի ներկայիս տարածքում բնակավայրեր են եղել դեռևս մ.թ.ա. III հազարամյակից սկսած: Այդ են վկայում մինչ օրս պահպանված քարայր կացարանները և քաղաքի հարավային մասում գտնվող պղնձեդարյան բնակատեղու հետքերը:

Քաղաքի տարածքում տեղաբաշխված Համամլու բնակավայրի մասին հիշատակումներ կան 1800-ական թվականներից, 1961թ. բնակավայրն անվանակոչվել է Սպիտակ:

Սպիտակը մինչև 1988թ.-ը հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայումս քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական մի քանի ձեռնարկություններ, բնակչության հիմնական մասը իր զբաղվածությունն է գտնում գյուղատնտեսության ոլորտում: Ամբողջությամբ ավերվել է 1988թ. աղետալի երկրաշարժից:

### **Ստեփանավան քաղաք**

*Ստեփանավան* քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 15.8 հազ. բնակիչ) պարագիծը կազմում է 26.5 կմ և զբաղեցնում 1666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1375 մ. բարձրության վրա:

Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Ստեփանավանը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքի տարածքը շարունակաբար եղել է բնակատեղի վաղ բրոնզեդարյան շրջանից, որի ապացույցն են հանդիսանում Լոռի բերդի և Արմանիս գյուղի տարածքների վաղ բրոնզից մինչև ուշ բրոնզի դարաշրջանի բնակատեղիները և դամբարանադաշտերը: XVI-XVIII դարերում բնակատեղին կոչվել է Ջալալօղլի, իսկ 1930թ. քաղաքը վերանվանվել է Ստեփանավան:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

## Տաշիր քաղաք

**Տաշիր** քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 8.7 հազ. մարդ) այժմյան տարածքում գոյություն են ունեցել հայկական բնակատեղիներ դեռևս մ.թ.ա. III հազարամյակից:

**Քաղաքը** գտնվում է Երևանից 162, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Պահպանված են բազմաթիվ բնակատեղիներ հատկապես Չորագետ գետի ձախ ափին: Նշանավոր է Տաշիր բերդը, որը կառուցվել է մ.թ.ա. II հազարամյակի վերջում, բերդաքաղաքը հանդիսացել է Գուգարաց բղջիտության Տաշիր նահանգի կենտրոնը: Պատմության մեջ հայտնի է Տաշիրի մեծ իշխան Վրեն Տաշիրեցին, որը մասնակցել է 451թ. Ավարայրի ճակատամարտին:

Ներկայիս Տաշիր քաղաքը հիմնադրվել է 1834թ.-ին, որպես ռուսական արտրավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1937թ. վերանվանվել է Կալինինո և ընդգրկվել Ստեփանավանի շրջանի կազմում, 1961թ. առանձնացել է որպես քաղաքատիպ ավան, 1983թ.՝ հանրապետական ենթակայության քաղաք: Քաղաքը Տաշիր վերանվանվել է 1991թ.-ին:

Քաղաքով է անցնում **Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը**:

Քաղաքում գործել են **կաթի վերամշակմամբ** զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր,կարագ) լայն սպառում ունեն ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

## Ալավերդի քաղաք

**Ալավերդի** քաղաքը (2008թ. տարեվերջին՝ 15.9 հազ. մարդ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա):

Ալավերդու պղնձի հանքավայրերն օգտագործվել են դեռևս պղնձի դարաշրջանում, XVIII դարի վերջերին ֆրանսիացիներն այստեղ կառուցել են առաջին պղնձաձուլական գործարանը:

Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:

## **Ախթալա քաղաք**

*Ախթալա* քաղաքը (2008թ. տարեվերջին՝ 2.4 հազ. մարդ) գտնվում է Գեբեղի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա:

Քաղաքի այժմյան տարածքում բնակատեղիներ գոյություն են ունեցել դեռ վաղնջական ժամանակներից: Ուշ բրոնզի դարաշրջանի դամբարաններն առաջիններից մեկը պեղել է հայտնի հնագետ Ժակ Դը Մորգանը՝ XIX դարում: Մատուռներ և վանքեր կառուցվել են IV դարից սկսած, որոնց մեծ մասը պահպանվում է: Հուշարձանային համալիրի զարդը վերականգնվող Ախթալայի հայտնի վանքն է, որը կառուցվել է հին վանքի տեղում՝ X դարից հետո: Պահպանված է նաև բերդապարսպի մուտքի մասը՝ երկաթգծից 50 մ-ի վրա:

Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

## **Թումանյան քաղաք**

*Թումանյան* քաղաքը (1.9 հազ. մարդ) գտնվում է Գեբեղի աջ ափին (Երևանից 152 կմ հեռավորության վրա): Քաղաքի տարածքի հնագույն ժամանակներից բնակեցված լինելու մասին վկայում են բազում մատուռներն ու վանքերը: Հատկապես հայտնի է Քոբայր վանքային համալիրը՝ կառուցված VIII դարում:

Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

## **Շամլուղ քաղաք**

*Շամլուղ* քաղաքը (2008թ. տարեվերջին՝ 0.7 հազ. մարդ) գտնվում է Գեբեղ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա):

Տարածքի հուշարձանները վկայում են տարածքի վաղ շրջանում բնակեցված լինելու մասին: Հայտնի է իր պղնձի, արծաթի հանքավայրերով: XVI դարից հետո դարձել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը*, մարդ	
		2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ
Վանաձոր	ք. Վանաձոր	104971	104800
Այվերդի	ք. Այվերդի	16588	16524
	գ. Ակներ		
Ախթալա	ք. Ախթալա	2412	2399
	գ. Առողջարանին կից		
Թումանյան	ք. Թումանյան	1864	1854
	գ. Քոբեր կայարանի		
Շամլուղ	ք. Շամլուղ	821	773
	գ. Ախթալա		
	գ. Բենդիկ		
Սպիտակ	ք. Սպիտակ	15145	15146
Ստեփանավան	ք. Ստեփանավան	16290	16237
	գ. Արմանիս		
Տաշիր	ք. Տաշիր	8732	8653

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**, մարդ	
			2008թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ
1	Ագարակ		1223	1199
2	Ազնվաձոր		304	354
3	Աթան		221	209
4	Ահնիձոր		234	216
5	Ամրակից		572	537
6	Այգեհատ		307	223
7	Անտառամուտ		299	299
8	Անտառաշեն		298	298
9	Ապավեն		137	136
10	Արդվի		200	201
11	Արծնի		299	300
12	Արջուտ	•Արջուտ •Արջուտ կայարանին կից	1432	1470
13	Արևածագ		737	737
14	Արևաշող		2718	2800
15	Աքորի		2978	2987
16	Բագում		998	1087
17	Բլագոդարնոյե		257	240
18	Բովաձոր		280	282
19	Գարգառ		1355	1357
20	Գեղասար		925	931

\* ՀՀ Լոռու մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:.

\*\* ՀՀ Լոռու մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2009թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.4%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:



	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **, մարդ	
			2008թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ
21	Գյուլագարակ		2214	2108
22	Գոզարան		1434	1440
23	Գուգարք		6562	6861
24	Դաշտադեն		129	131
25	Դարպաս		1800	1961
26	Դեբետ		909	930
27	Դսեղ		2193	2221
28	Եղեգնուտ		872	862
29	Թեղուտ		755	757
30	Լեջան		957	942
31	Լեռնահովիտ		1444	1355
32	Լեռնանցք		1605	1570
33	Լեռնապատ		2332	2334
34	Լեռնավան		1516	1531
35	Լերմոնտով		1010	1005
36	Լոռի բերդ		439	437
37	Լորուտ		1037	1084
38	Լուսաղբյուր		1218	1198
39	Խնկոյան		285	354
40	Ծաթեր		358	381
41	Ծաղկաբեր		1303	1362
42	Ծաղկաշատ		262	218
43	Կաթնաղբյուր		962	972
44	Կաթնաջուր		1956	1821
45	Կաթնառատ		1003	1010
46	Կաճաճկուտ		462	460
47	Կարմիր Աղեկ		186	175
48	Կողես		368	383
49	Կուրթան		2307	2246
50	Հագվի		486	508
51	Հալավար	• Հալավար • Գյուլլուդարա • Հայդարլի • Քիլիսա	167	166
52	Հաղպատ		748	752
53	Հարթագյուղ		1351	1277
54	Հորարձ		815	818
55	Հովնանաձոր		80	82
56	Չյունաշող		212	198
57	Չորագետ		259	266
58	Չորագյուղ		387	380
59	Չորամուտ		366	344
60	Ղուրսալ		619	602
61	Ճոճկան		2115	2098
62	Մարգահովիտ		3777	3735
63	Մարց		645	638
64	Մեղովկա	• Մեղովկա • Կրուգայա շիշկա	409	409
65	Մեծ Այրում	• Մեծ Այրում • Փոքր Այրում	911	940
66	Մեծավան		5595	5602
67	Մեծ Պառնի		1975	2013
68	Մեղվահովիտ	• Մեղվահովիտ	254	270

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **, մարդ	
			2008թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ
		• Նորամուտ		
69	Միխայելովկա		623	648
70	Մդարթ		525	517
71	Յաղդան		100	105
72	Նեղոց		321	319
73	Նովոսելցովո		189	191
74	Նորաշեն		1420	1145
75	Նոր Խաչակապ		675	592
76	Շահումյան		3015	3007
77	Շամուտ		299	298
78	Շենավան		510	520
79	Շիրականուտ		2477	2584
80	Շնող		3100	3140
81	Չկալով		153	149
82	Պաղաղբլուր		184	164
83	Պետրովկա		226	212
84	Պրիվոլնոյե		1044	1039
85	Պուշկինո		257	249
86	Ջիլիգա		108	110
87	Ջրաշեն		3653	3563
88	Սարալանջ		200	203
89	Սարահարթ		1453	1463
90	Սարամեջ		1583	1688
91	Սարատովկա	• Սարատովկա • Գետավան	415	466
92	Սարչապետ		2107	2101
93	Սվերդլով		1157	1091
94	Վահագնաձոր		256	219
95	Վահագնի		1021	995
96	Վարդաբլուր		1327	1341
97	Ուրուտ		1066	1065
98	Ուրասար		388	383
99	Փամբակ	• Փամբակ • Փամբակ կայարանին կից	376	380
100	Քարաբերդ		102	101
101	Քարաձոր		456	450
102	Քարինջ		664	633
103	Քարկոփ		419	418
104	Օձուն	• Օձուն • Ամոջ	5889	5635
105	Ֆիոլետովո		1394	1412

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՑԻՆ ՀԱՄԱՑՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2008թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5163	4837
Ծնվածներ, մարդ	120	56	64
Մահացածներ, մարդ	103	48	55
Ամուսնություններ	50	X	X
Ամուսնալուծություններ	15	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	30.7	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	124	61	63
հանրակրթական	1256	615	641
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	75	55	20
նախնական մասնագիտական (արհեստագործական)	8	2	6
միջին մասնագիտական	98	62	36
բարձրագույն մասնագիտական	214	128	86
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	29176	...	...
Մարզիկներ, մարդ	142	23	119
Զբոսայգիներ, մարդ	3238	...	...
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	146	124	22
բժիշկներ	19	...	...
միջին բուժանձնակազմ	43	...	...
Գործազուրկներ /պաշտոնազուրկ գրանցված/, մարդ	405	282	123
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1880	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	814	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	24922	...	...
թատրոն	887	...	...
համերգ	-	-	-
թանգարան	368	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	28	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	9	X	X
միջին ծանրության	8	X	X
ծանր	11	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: